

ՆԱԻԱՍԱՐԴ

ՄԱՐԶԱԿԱՆ ՅԱԻԵԼՈՒԱԾ

Ա. ՏԱՐԻ

ԹԻ 10

ՅՈՒՆԻՍ 2003

Ի ԽՆԴԻՐ ՀԱՅՐԵՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՎԵՐԵԼՔԻՆ

Բազմիցս հաստատած ենք, որ Հայաստանի ֆուտպոլի ազգային խումբը վերջին երկու տարիներուն ուշագրաւ յառաջդիմութեան մէջ է, բան մը, որ ողջունելի է ամենեւին իրաքանչիւր հայու համար: Ի վերջոյ ֆուտպոլը ծանօթ է բոլորին, թէ որքա՛ն կշիռ ունի հաւասարապէս մարզական թէ քաղաքական - տնտեսական առումով: Հետեւաբար, այս մարզին մէջ որեւէ իրագործում պէտք է դիտել այդ հասկացողութեամբ եւ երբեք պէտք չէ թերագնահատել ու միամտաբար ըսել՝ եղածը ամէն ֆուտպոլ մըն է, ի՛նչ պէտք կայ այսքան մեծցնելու...

Վերադառնալով հայրենի ֆուտպոլին, վերելքի հաստատումը անժխտելի ըլլալով հանդերձ, կան բացթողումներ ներքին ակումբներու եւ խումբերու իմաստով յատկապէս: Հակառակ ազգային խումբին վերելքին, Հայաստանի ախոյեանութիւնը դժբախտաբար չ'ապրիր միեւնոյն վերելքը ու կը մնայ շուրջ մէջ, ինչ որ մտահոգիչ երեւոյթ է անկասկած: Պատճառները հաւանաբար շատ են եւ անոնց մէջ թափանցելը անիմաստ է: Կարելորդ սրբագրելն է: Եւ սրբագրութեան նախաքայլը կամեցողութիւնն է: Եթէ ունինք այդ կամեցողութիւնը, մնացեալը ինքնաբերաբար ժամանակին հետ կը հարթուի:

Կամեցողութեան խոստումներ տրուեցան ՖԻՖԱի նախագահ Սէփ Պլէթըրի, որ առաջին անգամ ըլլալով կ'այցելէր Կովկաս եւ կովկասեան շրջապտոյտին սկսաւ Հայաստանէն: Հայրենի քաղաքական, ինչպէս նաեւ մարզական - ֆուտպոլի աւագանիին հետ իր ունեցած հանդիպումներուն ընթացքին, Պլէթըր ՖԻՖԱի կատարած նիւթական օժանդակութեան - զօրակցութեան դիմաց ստացաւ ֆուտպոլի վերելքի խոստումներ, որոնց գործարարութիւնը անշուշտ կը կարօտի որոշ ժամանակի:

ՖԻՖԱի եւ Պլէթըրի կողքին, մենք եւս անհամբեր կը սպասենք այդ խոստումներուն, ի խնդիր հայրենի ֆուտպոլի վերելքին, ի խնդիր հայրենի ընդհանրապէս մարզական աշխարհի «բարգաւաճում»ին:

ՖԻՖԱԻ ՆԱԽԱԳԳԱՆ ՍԷՓ ՊԼԵԹԸՐ ՏԵՍԱԿՅԵՅԱԲ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԳԱՆ ՌՈՊԵՐԹ ՔՈՉԱՐԵԱՆԻ ՆԵՏ



(Տեսնել էջ 8)

ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՆԴԻՍԱՑԱԻ ՅՐԴ

Անդրանիկի աղջկանց խումբին ախոյեան հանդիսանալէն շուրջ երկու ամիս ետք, Անդրանիկի տղոց կազմը իր կարգին կարելորդ նուաճում մը արձանագրեց, հայկական ակումբին նապահովելով «ֆայնրլ ֆոր»ի տոմսը, յետ սուր պայքարի:

«Ֆայնրլ ֆոր»ի մրցումներուն Սաժէսի դէմ 3 - 0 տեղի տալէ ետք, Անդրանիկի տղոց կազմը 3 - 4րդ դիրքերուն համար մրցումներուն 2 - 1 արդիւնքով տապալեց Շանվիլը (80 - 86, 111 - 94, 74 - 66) եւ գրաւեց պատուաբեր երրորդ դիրքը:

ԹԵՆԻՍ. ՌՈՒԱՆ ԿԱՐՈՍ

ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ԴՈՒՐՍ ՄՆԱՅԻՆ Բ. ՀԱՆԳՐՈՒԱՆԵՆ ԻՍԿ



(Տեսնել էջ 8)

ملحق أرتاك

Հ.Մ.Ը.Մ. ԱՆԹԻԼԻԱՍԻ ՈՒՇԱԳՐԱԻ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ՄԷՉ



26 Ապրիլ 2003ին սկսաւ Լիբանանի պասքեթպոլի տարիքային խումբերու ախոյեանութիւնը, որուն Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս մասնակցեցաւ աղջկանց 3 եւ տղոց 3 կազմերով՝ 84 - 85ի ծնունդ, 86 - 87ի ծնունդ եւ 88 - 89 - 90ի ծնունդ:

Բաղդատած նախորդ տարուան, այս տարի արդիւնքները շատ աւելի լաւ եւ ընդունելի էին: Բան մը, որ կը հաստատէ Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի պասքեթպոլի դպրոցին որակը:

Արդարեւ, Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի աղջկանց 86 - 87ի եւ 88 - 89 - 90ի ծնունդ խումբերը հանդիսացան իրենց տարիքային խմբաւորումին մէջ Լիբանանի փոխ ախոյեան, տեղի տալէ ետք յաջորդաբար Անդրանիկի (73 - 62) եւ Ռիատիի (65 - 60) դիմաց:

Տեղին է նշել, որ իրենց խաղաոճով 88 - 89 - 90ի ծնունդ խումբէն Սալա Աբրահամեան եւ 86 - 87ի ծնունդ խումբէն Սարին Գոյումեան եւ Արին Խաչերեան բացառիկ խաղարկութիւն ունեցան եւ արժանացան Լիբանանի պասքեթպոլի ֆետերասիոնի գնահատանքին:

Առիթն է նախ նշելու Լիբանանի տղոց Դ. դասակարգի ախոյեանութեան Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի խումբին մասնակցութիւնը. ան մրցաշարքի 3րդ հանգրուանը թելակոխելէ ետք դուրս մնաց:

Ստորեւ տարիքային խումբերուն եւ Դ. դասակարգի տղոց մրցումներուն արդիւնքները.

ՏՂԱՔ

(1984 - 85ի ծնունդ)

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Նահտա Քըրընթ Շեհուան 20 - 0 (ի բացակայութիւն)

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Հաֆրան Էհմէթ 20 - 0 (ի բացակայութիւն)

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Ֆէյթրուն 59 - 63

(1986 - 87ի ծնունդ)

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Շէպիպէ Շիյան 50 - 53

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - E. B. D. 20 - 0 (ի բացակայութիւն)

(1988 - 89 - 90 ծնունդ)

Ա. հանգրուան

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Ռասիկն Հազմիէ 75 - 40

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Պթըրթին 129 - 46

Բ. հանգրուան

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Ռիսալա 79 - 19

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Սաժէս Պէյրութ 71 - 90

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Քահրապա 83 - 91

ԱՂՋԻԿՆԵՐ

(1984 - 85ի ծնունդ)

Ա. հանգրուան

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Քարմէ Ապ Իլիաս 40 - 58

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Պիպլոս 20 - 0

Բ. հանգրուան

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Ղազիր 20 - 0

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Սէն Ժորժ 48 - 49

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Շանվիլ 52 - 86

(1986 - 87ի ծնունդ)

Ա. հանգրուան

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Ժամհուր 53 - 18

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Ռիատի Պէյրութ 72 - 57

(Բ. հանգրուան)

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Լիսէ Նասիոնալ 86 - 30

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Անդրանիկ 73 - 65

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Հաֆրուն Էհմէթ 20 - 0 (ի բացակայութիւն)

Կիսաւարտական

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Ֆիտա Սայտա 59 - 52

Աւարտական

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Անդրանիկ 62 - 73

(1988 - 89 - 90ի ծնունդ)

Ա. հանգրուան

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Պիպլոս 78 - 33

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Սաժէս Պէյրութ 58 - 54

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Անիպալ Զահլէ 20 - 0 (ի բացակայութիւն)

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Ժամհուր 56 - 35

Կիսաւարտական

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Ղազիր 85 - 78

Աւարտական

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Ռիատի 60 - 65

Տղաք Դ. դասակարգ

Ա. հանգրուան

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Պէյթ Մէրի 84 - 62

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Ալ Պարպարա 77 - 39

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Ղիսէ 103 - 51

Բ. հանգրուան

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Անդրանիկ Սիւն Էլ Ֆիլ 72 - 70

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Շիրաա 70 - 66

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Շէպիպէ Շիյան 65 - 80

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Ժիտտայէլ 84 - 39

Գ. հանգրուան

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Եանապիհ 70 - 74

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Ամալ Պիքֆայա 81 - 87

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս - Սաժէս 0 - 20 (Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս դաշտ չներկայացաւ)



Հ.Մ.Ը.Մ. ԱՆԹԻԼԻԱՍ ՀԱՆԴԻՍԱԶՅԱԿԻ 5ՐԴ



Հակառակ այն հրողություն, որ Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի ճատրակի կազմը, ի տարբերություն այլ կազմերու, օտար մարզիչներով եւ մարզիկներով չէր օժտուած, յաջողեցաւ մնալ Ա. դասակարգի խումբերու շարքին:

Նշենք, որ ախոյեանութեան 12 հանգրիւաններէն մէկը հիւրնկալեց Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս, Մրզհէրի «Աղբալեան» մարզամշակութային հասնալիքին մէջ:

Հարկ է շեշտել նաեւ, որ օտար մարզիկներու եւ մարզիչներու ներկայութիւնը այլ կազմերու մէջ ժխտական անդրադարձ կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի կազմին վրայ, ուր նախորդող տարիներուն միշտ ալ պայքարած է ախոյեանութեան բարձրագոյն դիրքին համար եւ ախոյեանութիւնը տեսարար աւարտած է առաջին ետեակին մէջ: Դժբախտաբար, նիթական փոքր զոհողութեամբ օտար մարզիչ - մարզիկ մը ապահովելու ծրագիրներ տակաւին գործադրութեան չեն դրուած, եւ Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի կազմին կը մնայ պայքարիլ առաջին դասակարգ մնալու համար:

Յունիս 1ին վերջ գտան ճատրակի Լիբանանի ակմբային ախոյեանութեան մրցումները, որոնց իրենց մասնակցութիւնը բերին 14 ակումբներ: Այս տարուան ախոյեանութիւնը ունէր յատուկ կարեւորութիւն, որովհետեւ անոր աւարտին դասաւորման առաջին 8 դիրքերը գրաւողները պիտի մնային Ա. դասակարգ, իսկ մնացեալ ճր պիտի կազմէին Բ. դասակարգը:

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասը կը ներկայացնէին Բաֆֆի Ծիկերեան, Քնարիկ Մուրատեան, Սերժ Յովնանեան, տորթ. Գէորգ Թէրզեան, Սիւզան Մուրատեան, Խաչիկ Մուրատեան (խմբապետ) եւ Գէորգ Կոստանեան:

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի կազմէն լաւագոյն արդիւնքը արձանագրեց միջազգային վարպետ Քնարիկ Մուրատեան, որ 12 կարելիէն ապահովեց 9 կէտ (1 պարտութիւն, 4 հաւասարութիւն եւ 7 յաղթանակ): Այսպէսով Քնարիկ

ԼԻԲԱՆԱՆԻ ԱԹԼԵԹԻԶՄԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Հ. Մ. Ը. Մ. ՇԱՀԵՑԱԿԻ 2 ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ, 1 ԵՐԿՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՒ 3 ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

Անցեալ շաբաթավերջին տեղի ունեցան Լիբանանի աթլետիկայի ախոյեանութեան մրցումները՝ երկու դասակարգերու մէջ, միջակ (14-15 տարեկան) եւ փոքր (13 տարեկան եւ վար): Հ. Մ. Ը. Մ. իր մասնակցութիւնը բերաւ իր երեք մասնաճիւղերով՝ Պէլրուօ, Պուրճ Համուտ եւ Ժիւնի:

Միջակ տղոց եւ աղջկանց մրցումներուն, Յովհաննէս Ծիտիաք երեք քայլ ուստումի մէջ հանդիսացաւ առաջին (11,20 մ.), իսկ մէկ քայլ ուստումի մէջ Ժերար Կիլկիլեան՝ երրորդ (5 մ.):

Տղոց դրօշարշաւի խումբը (Ժերար Կիլկիլեան, Ծոնի Ծիտիաք, Կիբո Գարավարդանեան եւ Ծորճ Ֆէթուլահեան) հանդիսացաւ առաջին, իսկ 80 մետր վազքի մրցումներուն Ծորճ Ֆէթուլահեան՝ երրորդ:

Փոքր տղոց եւ աղջկանց մրցումներուն, բարձրութիւն ցատկելու մէջ Լոոի Զափարեան հանդիսացաւ երկրորդ (1,20 մ.), իսկ Հրակ Աբէլեան՝ երրորդ (դարձեալ բարձրութիւն ցատկել):

Ա. ՍԷ. ՄԻԼԱՆ ԽԼԵՑ «ՉԷՄՓԻԸՆՉ ԼԻԿ»Ի ԲԱԺԱԿԸ



«ՉԷՄՓԻԸՆՉ ԼԻԿ»ի աւարտական մրցումին, որ տեղի ունեցաւ անցեալ Չորեքշաբթի օր, Մանչեսթըր Եունայթըդի «Օլտ Թրեֆորտ» դաշտին վրայ, Ա. ՍԷ. Միլան փենալթիներով (3-2) պարտութեան մատնելէ ետք Եուվենթուսը, վեցերորդ անգամ ըլլալով բարձրացուց բաժակը (1963, 1969, 1989, 1990, 1994 եւ 2003):

Ա. ՍԷ. Միլանի այս վեցերորդ բաժակը անսոսնալի եղաւ ամէնէն աւելի՝ խումբին խմբապետ Փաուլօ Մալտինիի համար, ոչ թէ որովհետեւ ան չորրորդ անգամ ըլլալով կը բարձրացնէր բաժակը, այլ որովհետեւ Ա. ՍԷ. Միլան իր առաջին բաժակը շահած էր քառասուն տարի առաջ, Փաուլոյի հօր՝ Սեզարէի հետ:

Մրցումին 120 վայրկեանները վերջ գտան 0-0 արդիւնքով, որմէ ետք դիմուեցաւ անխուսափելի փենալթիներուն: Ա. ՍԷ. Միլանի բերդապահ Տիտա յաջողեցաւ զսպել էրեք փենալթի, իսկ Եուվենթուսի բերդապահ Ժիանլուիգի Պիֆոնն՝ երկու փենալթի:

Մրցումէն ետք, Եուվէի մարզիչ Մարսելլօ Լիփի այս պարտութեան պատճառը նկատեց իր մարզիկներուն գերլուծութիւնը եւ *փլէյմէյթըր* Փաւլէ Նետվէտի բացակայութիւնը (կախակալուած):

2001ին, Եուվենթուսի կողմէ պաշտօնանկ եղած մարզիչ Քարլօ Անչելոթթի յաջողեցաւ իր նախկին կազմէն վրէժը լուծել, անոր հետ շահելով այս բաժակը: Նշենք, թէ ան իբրեւ



մարզիչ եւ իբրեւ մարզիկ առաջին անգամ ըլլալով բաժակ մը կը շահէր:

Ստորեւ՝ «ՉԷՄՓԻԸՆՉ ԼԻԿ»ի բաժակին տիրացած խումբերը 1992էն առդին.

- 1992-93 Մարսելյ (Ֆրանսա)
- 1993-94 Ա. ՍԷ. Միլան (Իտալիա)
- 1994-95 Ալաքս Ամսթերտամ (Հոլանտա)
- 1995-96 Եուվենթուս (Իտալիա)
- 1996-97 Պորուսիա Տորթնուտ (Գերմանիա)
- 1997-98 Ռէալ Մատրիտ (Սպանիա)
- 1998-99 Մանչեսթըր Եունայթըդ (Անգլիա)
- 1999-2000 Ռէալ Մատրիտ (Սպանիա)
- 2000-2001 Պալերմ Միլանիս (Գերմանիա)
- 2001-2002 Ռէալ Մատրիտ (Սպանիա)
- 2002-2003 Ա. ՍԷ. Միլան (Իտալիա)

ԵՒՐՕ - 2004Ի ՉՏՈՒՄՆԵՐ

ՆԱՅԱՍՏԱՆ - ՈՒՔՐԱՆԻԱ ՃԱԿԱՏՈՒՄ 7 ՅՈՒՆԻՍԻՆ

Յ առաջիկայ Եարաթ օր Հայաստանի ֆութպոլի հաւաքականը «իր ուժերը պիտի չափէ» Ուքրանիոյ հօթ կազմին հետ: Եւրօ-2004ի զտումներու ծիրէն ներս տեղի ունենալիք այս մրցումը մեծ կարեւորութիւն կը ներկայացնէ զոյգ խումբերուն համար: Ուքրանիա եւ Յունաստան 4 մրցումներէ ապահոված են վեցական կէտ եւ կը գրաւեն ճոր խմբակի յաջորդաբար 2րդ եւ երրորդ դիրքերը՝ Սպանիոյ ետին (այս վերջինը 4 մրցումէ ապահոված է 10 կէտ): Հայաստան կը գրաւէ 4րդ դիրքը՝ 4 կէտով, եւ բնականաբար իր յոյսերը չէ կորսնցուցած անակնկալներ ստեղծելու, ի տարբերութիւն Հիւսիսային Իրլանտայի կազմին, որ ունի միայն 1 կէտ:

Լվովի մէջ տեղի ունենալիք այս ճակատումին իրենց մասնակցութիւնը բերող հայրենի մարզիկներուն ցանկը արդէն յայտարարուած է մարզիչ Միքայիլ Սթոյքայի կողմէ: Ստորեւ՝ անուանացանկը:

■ **Բերդապահներ.**՝ Ռոման Պերեգովսկի (Տիմամօ Մոսկուա/Ռուսիա), Էտել Աբուլա Պերէ (Փիւնիկ Երեւան):

■ **Յետասպահներ.**՝ Սարգիս Յովսէփեան (Սան Փեթերսպորկ/Ռուսիա), Կարէն Տոխոյեան (Սամարա/Ռուսիա), Յարութիւն Վարդանեան (Եանկ Պոլզ/Չիլիցերիա), Արմէն Պետիկեան (Միքա Աշտարակ), Արկադի Տոխոյեան (Միքա Աշտարակ), Արթիւր Մկրտչեան (Փիւնիկ Երեւան), Խօսէ Անտրէ Պիլիպիօ (Փիւնիկ Երեւան):

■ **Միջնապահներ.**՝ Ռոմիկ Խաչատրեան (Օլիմպիաքոս Նիկոսիա/Կիպրոս), Արթիւր Պետրոսեան (Եանկ Պոլզ/Չիլիցերիա), Քարլ Լոմպէ (Փիւնիկ Երեւան), Էտուարտ Փասցիկեան (Փիւնիկ Երեւան), Ալպեր Սարգիսեան (Արսենալ Քիել/Ուքրանիա), Սերգէյ Առաքելեան (Բանանց Երեւան), Ռոմէօ Զաւէնեան (Բանանց Երեւան), Արարատ Յարութիւնեան (Շիրակ Կիւմրի):

■ **Յաւաքականներ.**՝ Արամ եւ Արտաւազ Քարամեան եղբայրներ (Փաթրա/Յունաստան), Եղիա Եարումեան (Սոփրոն/Հունգարիա), Արա Յակոբեան (Շիրակ Կիւմրի):



ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՑԱՇԱՐՔ

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ՕԼԻՄՓԻԲ ՀԱՍԱՆ ԿԻՍԱԽԱՂԻՆՍԱԿԱՆ ՀԱՆԳՐՈՒՄՆ

Լիբանանի ֆուտպոլի բաժակի մրցաշարի քառորդ արձանագրեց Ահտի հետ:

Ա. դասակարգի ախոյեանութեան ընդհանուր դասաւորման 2րդ դիրքը գրաւող Ահտ, մրցումին 17րդ վայրկեանին բացաւ հաշիւը, շնորհիւ՝ Պասէմ Պարպարի:

Ա. կիսախաղին 1-0 արդիւնքով պարտուած Հ. Մ. Ը. Մ., Բ. կիսախաղին յաջողեցաւ նշանակել երկու կոլ, շնորհիւ՝ Վարդան Ղազարեանի եւ Թոմաս Պիրոքի:

Մրցումին իրաւարարը՝ Թալէպ Ռամատան բնաւ չարդարացուց իր կողմը եւ իր կողմնակալ սուլիչներով մթնոլորտը խանգարեց:

Մրցումին 98րդ վայրկեանին, Ահտ նշանակեց իր հաւասարութեան կոլը, շնորհիւ՝ Մահմուտ Շահհուտի:

Լիբանանի ֆուտպոլի բաժակի մրցաշարի քառորդ արձանագրեց Ահտի հետ:

Ահտի դէմ 1-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրելով, Հ.Մ.Ը.Մ. ոչ միայն ապահովեց կիսաարտական հանգրուանին իր տոմսը, այլեւ անգամ մը եւս եկաւ փաստելու, որ պատահական չէր, որ նախորդ հանգրուանին մրցաշարքէն դուրս ձգած էր Ա. դասակարգին մաս կազմող այլ խումբ մը՝ Սաֆան:

Մրցումին 19րդ վայրկեանին, լիբանանեան դաշտերուն վրայ մեծ



փորձառութիւն ունեցող Վարդան Ղազարեան յիշեցուց բոլորին, թէ կը մնայ վտանգաւոր մարզիկ մը, երբ դաշտին գրեթէ կեսէն սքանչելի յոպով մը պարտութեան մատնեց բերդապահ Պիլալ Հաշէմը, որ յառաջացած ըլլալով իր դիրքէն՝ ոչինչ կրցաւ ընել դէպի բերդ ուղղուող գնդակը կասեցնելու համար:

Բ. կիսախաղին, Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները աւելի պաշտպանողական խաղ մը կիրարկելով հանդերձ յաջողեցան կազմակերպել հակաարձակումներ, առանց սակայն կոլ կարենալ նշանակելու:

Նշենք, թէ Բ. կիսախաղին սկիզբը, Ահտի մէկ մարզիկին հարուածը զսպուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի ուղղահայեաց սիւնին կողմէ:

Հ.Մ.Ը.Մ.ի բերդապահ Ժաք Պշաքնեան, որ յաջորդաբար երկրորդ մրցումն ըլլալով դաշտ կը ներկայանար իբրեւ հիմնական բերդապահ (կախակալուած բերդապահ Սաֆո Հսքիճեանի փոխարէն), յաջողեցաւ անտիկ պահել իր բերդը:

Օրուան իրաւարարին՝ Թալաաթ Նաժըմի սուլիչը եղաւ արդար:

Իր կարգին, Օլիմփիք ապահովեց կիսաարտական հանգրուանին իր տոմսը, 2-1 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Անսարը:



ՀԱՆԵԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Ֆուտպոլով հետաքրքրուած մեր ընթերցողներուն կու տանք շահեկան տեղեկութիւններ ուր երկիրներու ֆետերասիոններուն մասին:

ՀԱՅԱՍՏԱՆ

Նախագահ՝ Ռուբէն Հայրապետեան
Փոխ նախագահ՝ ցարդ չէ յայտարարուած
Ընդհանուր քարտուղար՝ Արման Յովհաննիսեան
Գանձապահ՝ Գէորգ Փափիքեան
Հիմնուած՝ 1992ին
ՖԻՖԱին անդամակցած՝ 1992ին
Հեռաձայն՝ ++374 -1 535084
Ֆաքս՝ ++374 - 1 539517
Ինթըրնէթ՝ www.armenia.fifa.com

ԼԻԲԱՆԱՆ

Նախագահ՝ Հաշէմ Հայտար
Փոխ նախագահ՝ Քապալան Եամմին
Ընդհանուր քարտուղար՝ Պահիժ Ապու Համզա
Գանձապահ՝ Մուսա Մաքքի
Հիմնուած՝ 1933ին
ՖԻՖԱին անդամակցած՝ 1935ին
Հեռաձայն՝ ++961 - 1 745745, 745160 եւ 745161
Ֆաքս՝ ++961 - 1 349529 եւ 744831
Ինթըրնէթ՝ www.lebanesefa.com

ՍՈՒՐԻԱ

Նախագահ՝ Ֆարուք Պոզո
Փոխ նախագահ՝ Ահմէտ Ժապպան
Ընդհանուր քարտուղար՝ Թուֆիք Սարհան
Գանձապահ՝ Թուֆիք Սարհան
Հիմնուած՝ 1936ին
ՖԻՖԱին անդամակցած՝ 1937ին
Հեռաձայն՝ ++963 - 11 333 5866, 331 4714
Ֆաքս՝ ++963 - 11 333 1511

ՍՊԱՆԻԱ

Նախագահ՝ Անխել Մարիա Վիլար Լլոնա
Փոխ նախագահ՝ Խուան Անթոնիո Փատրոն Մորալէս
Ընդհանուր քարտուղար՝ Ժերարտո Կոնզալէս Օթերո
Գանձապահ՝ Խուան Լուիս Լարէս Սարոպէ
ՖԻՖԱին անդամակցած՝ 1904ին
Հեռաձայն՝ ++34 - 91 420 1362
Ֆաքս՝ ++34 - 91 420 2094
Ինթըրնէթ՝ www.rfef.es

ԻՏԱԼԻԱ

Նախագահ՝ Ֆրանքո Քարարո
Փոխ նախագահ՝ Ժիանքարլո Ապէթէ
Ընդհանուր քարտուղար՝ Ժիանքարլո Ծենթիլէ
Գանձապահ՝ Ֆրանչէսքո Ժիրելի
ՖԻՖԱին անդամակցած՝ 1905ին
Հեռաձայն՝ ++39 - 06 84 911
Ֆաքս՝ ++39 - 06 84 912 526
Ինթըրնէթ՝ www.figc.it

ԳԵՐՄԱՆԻԱ

Նախագահ՝ Կերհարտ Մայրր-Վորֆելտըր
Փոխ նախագահ՝ Էնկրլպըրթ Նելլէ
Ընդհանուր քարտուղար՝ Հորսթ Ծմիթ
Գանձապահ՝ Թէօ Զվանգիկըր
Հիմնուած՝ 1900ին
ՖԻՖԱին անդամակցած՝ 1904ին
Հեռաձայն՝ ++49 - 69 67880
Ֆաքս՝ ++49 - 69 678 8266
Ինթըրնէթ՝ www.dfb.de

ՖՐԱՆՍԱ

Նախագահ՝ Քլօտ Սիմոնէ
Փոխ նախագահ՝ Ֆրետերիք Թիրիէ
Ընդհանուր քարտուղար՝ Ժերար Էնօ
Գանձապահ՝ Պեռնար Պաքուր
ՖԻՖԱին անդամակցած՝ 1904ին
Հեռաձայն՝ ++33 -1 4431 7300
Ֆաքս՝ ++31 - 1 4720 8296
Ինթըրնէթ՝ www.fff.fr

ԱՆԳԼԻԱ

Նախագահ՝ Ծէֆրի Թոմսըն
Փոխ նախագահ՝ Տէյվիտ Տէն
Ընդհանուր քարտուղար՝ Տէյվիտ Տէյվիս
Գանձապահ՝ ցարդ չէ նշանակուած
ՖԻՖԱին անդամակցած՝ 1905ին
Հեռաձայն՝ ++44 - 207 745 4545
Ֆաքս՝ ++44 - 207 745 4546
Ինթըրնէթ՝ www.thefa.com

Ը Մ Բ Շ Ա Մ Ա Ր Տ

ՀԱՅԱՍՏԱՆ ԶՈՐՍ ՄԵՏԱԼՈՎ ՎԵՐԱԴԱՐՉԱԻ ԹՈՒՐՔԻԱՅԷՆ

Մարմարայի մէջ (Թուրքիա) աւարտեցան ազատ ոճի ըմբշամարտի միջազգային մրցումները, որոնց իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Հայաստան՝ 12 ըմբշուներով (9 տղաք եւ 3 աղջիկներ) եւ շահեցաւ չորս մետալներ: Մրցաշարքին աւարտին Հայաստան գրաւեց խմբային ընդհանուր դասաւորման 3րդ դիրքը, գերմանացիներուն եւ թուրքերուն ետին:

Անհատական մրցումներուն, արծաթէ մետալներուն տիրացան Աննա Կարապետեան (48 քկ.) եւ Տաթևիկ Պաղտասարեան (51 քկ.), իսկ պրոնզ մետալներուն՝ Արմէն Կարապետեան (55 քկ.) եւ Սուրէն Մարկոսեան (66 քկ.):

ՀԱՅԱՍՏԱՆԻ յունահռոմէական ոճի ըմբշուներ՝ Ռոման Ամոնեան (50 քկ.) եւ Լեւոն Գեղամեան յաջողեցան երկու արծաթ մետալներ շահիլ Պելկրատի մէջ (Սերպիա) տեղի ունեցող Եւրոպայի ախոյեանութեան մրցաշարքին:

Պուլկարիան ներկայացնող Ողիմպիականի կրկնակի ախոյեան Արմէն Նազարեան հանդիսացաւ Եւրոպայի ախոյեան (60 քկ.), իսկ այլ երկիրներ ներկայացնող երկու հայազգի ըմբշուներ եւս հանդիսացան փոխ ախոյեան, տիրանալով արծաթ մետալներու:

ՖՐԱՆՍԱՅԻ, ԳԵՐՄԱՆԻՈՅ, ԱՆԳԼԻՈՅ ԵՒ ԻՏԱԼԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԿՈՒՍՔՈՐԸՐՆԵՐԸ

Ֆուտպոլի Ֆրանսայի, Գերմանիոյ (Պունտրալիկա), Անգլիոյ եւ Իտալիոյ (Քալչիո) 2002 - 2003 եղանակի ախոյեանութեանց արարտին, Լիոն, Պալերն Միւնիխ, Մանչեսթըր Եունայթըտ եւ Եովենթուս հանդիսացան իրենց երկիրներուն ախոյեանները: Սպանիոյ պարագային ցարդ ախոյեանին ճակատագիրը անորոշ է, մկատի ունենալով որ տակաւին երկու հանգրուան կը մնայ արարտին:

Ստորեւ՝ Գերմանիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ եւ Անգլիոյ կոլսքորըրները:

ՊՈՒՆՏՐԱԼԻԿԱ

1.- Ծիովանի Էլպեր (Պալերն Միւնիխ) եւ Թոմաս Բրիսթիանսըն (Պոխում) 21ական կոլ



- 2.- Ալլթոն (Վերտըր Պրեմըն) 16 կոլ
- 3.- Քլաուտիօ Փիզարօ (Պալերն Միւնիխ) եւ Քեյն Բորիանի (Եթուրկարթ) 15ական կոլ
- 4.- Ֆրենտի Պոպիշ (Հանովըր-96), Մարքուս Երոթ (1860 Միւնիխ), Մարսելիինիօ (Հերթա Պերլին) եւ Պեռնարտօ Ռոմէօ (Համպուրկ) 14ական կոլ
- 5.- Պենժամին Լոթ (1860 Միւնիխ) եւ Եան Բուլըր (Պորուսիա Տորթ-ունտ) 13ական կոլ
- 6.- Սասա Բիրիշ (Նիւրնպերկ), Արթիւր Ուիշնիարէք (Արմինիա Պիլըֆելտ) եւ Թոմիսլաւ Մարիշ (Վոլֆսպուրկ) 12ական կոլ

ՖՐԱՆՍԱ

1.- Շապանի Նոնտա (Մոնպօ) 26 կոլ



- 2.- Փաուլերթա (Պորտօ) 23 կոլ
- 3.- Տիտիէ Տրոկպա (Կէնկան) 17 կոլ
- 4.- Հանրի Բամարա (Սըտան) եւ Ծիպրիլ Սիսէ (Օքսէն) 14ական կոլ
- 5.- Ժուինիօ (Լիոն) 13 կոլ
- 6.- Քապա Տիաուարա (Նիս), Սոնի Անտերսոն (Լիոն), Անթուան Սիպիերսքի (Լանս) եւ Տատօ Փրսօ (Մոնպօ) 12ական կոլ:

ՔԱԼՉԻՕ

1.- Բրիսթիան Վիերի (Ինթեր Միլան) 24 կոլ



- 2.- Ատրիան Միլի (Փարմա) 18 կոլ
- 3.- Ֆիլիփօ Ինցակի (Ա. Սէ. Միլան) 17 կոլ
- 4.- Ալեսանտրօ Տէլ Փիեռօ (Եովենթուս) 16 կոլ
- 5.- Քլաուտիօ Լոփէս (Լացիօ Ռոմա) եւ Ատրիանօ (Փարմա) 15ական կոլ
- 6.- Տարիօ Հուպներ (Փիաշենցա) եւ Ֆրանչեսքօ Թոթի (Ա. Էս. Ռոմա) 14ական կոլ
- 7.- Անթոնիօ Տի Նաթալէ (Էմփոլի) 13 կոլ
- 8.- Ծիուգեփէ Սինիորի (Պոլոնիա) եւ Ռոպերթօ Պանիօ (Պրեշիա) 12ական կոլ
- 9.- Բրիսթիանօ Տոնի (Աթալանթա), Ժուլիօ Բրուզ (Պոլոնիա), Տալիտ Թրեգեկէ (Եովենթուս), Պեռնարտօ Բորատի (Լացիօ Ռոմա) եւ Էմիլիան Պոնազոլի (Փարմա) 10ական կոլ

ԱՆԳԼԻԱ

- 1.- Ռուտ Վան Նիսթըրրույ (Մանչեսթըր Եունայթըտ) 25 կոլ
- 2.- Թիերի Հանրի (Արսենալ) 24 կոլ
- 3.- Ծէյմս Պէթի (Սաութհէմթթըրն) 23 կոլ
- 4.- Մարք Վիտուքա (Լիօ) 20 կոլ
- 5.- Մայքըլ Օուրն (Լիվըրպուլ) 19 կոլ
- 6.- Էլըն Եիրըր (Նիւքեալ) 17 կոլ
- 7.- Նիքոլա Անելքա (Մանչեսթըր Սիթի), Ռոպի Բին (Թորթենհամ), Հէրի Բիւրլ (Լիօ), Փօլ Սքուզ (Մանչեսթըր Եունայթըտ), Ռոպերտ Փիլէս (Արսենալ) եւ Ծիանֆրանքօ Յոլա (Չելսի) 14ական կոլ



ՖԻՖԱԻ ՆԱԽԱԳԱՆ ՍԷՓ ՊԼԷԹԸՐ ՏԵՍԱԿՑԵՑԱԿ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՆ ԹՈՊԷՐԹ ՔՈՉԱՐԵԱՆՆԵՐՆԵՐ

ՖԻՖԱԻ նախագահ Սեփ Պլեթըրը պատուիրակության մը ընկերակցությամբ այցելեց Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեանի:

Պլեթըրը, որ առաջին անգամ ըլլալով կ'այցելէ Կովկաս, ըսաւ, թէ Ռոպերթ Քոչարեանի գլխաւորութեամբ՝ Հայաստան յաջողութիւններ կ'արձանագրէ ոչ միայն մարզական կեանքին մէջ, այլեւ՝ տարբեր մարզերու մէջ հաւասարապէս:

Նախագահ Քոչարեան ըսաւ, թէ Հայաստանի ֆութպոլի ֆետերասիոնը վերջին տարիներուն ՖԻՖԱի օժանդակութեամբ բաւական յաջողութիւններու կրցած է հասնիլ:

ՖԻՖԱի նախագահը այցելեց նաեւ Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեանի: Վարչապետ Մարգարեան յատուկ շնորհակալութիւն յայտնեց ՖԻՖԱին, որ Հայաստանի տրամադրեց 400 հազար ամերիկեան տոլար՝ ֆութպոլի Հանրապետական դպրոցի վերակառուցման համար:

Պլեթըրը վարչապետին հետ հանդիպումէն ետք ըսաւ, որ Հայաստանի կառավարութեան ուղղակի եւ անուղղակի գորակցութեան համար ինք շնորհակալութիւն կը յայտնէ բոլորին:

Հանդիպումէն ետք Պլեթըրը ՖԻՖԱի յատուկ յուշամետալ մը շնորհեց վարչապետ Մարգարեանի:

Ապա, Պլեթըրը Երեւանի Մալաթիա թաղամասին մէջ գտնուող Է. Գրիգորեանի անուան ֆութպոլի մարզադպրոցի վերաբացումը կատարեց:

Հայաստանի մշակույթի, երիտասարդութեան հարցերու եւ մարմնակրթութեան փոխ նախարար Իշխան Զաքարեան ողջունելով Պլեթըրի Հայաստան այցելութիւնը, ըսաւ, որ ՖԻՖԱ - Հայաստան կապերը հետզհետէ աւելի կ'ամրապնդուին:



ARMENPRESS

րուստ եղած է ֆութպոլի տաղանդներով: Յիշելով «Արարատ-73»-ը, Պլեթըրը ըսաւ, որ այդ մէկը լաւագոյն ապացոյցն է Հայաստանի ֆութպոլիստներուն փառահեղ անցեալին մասին:

Եզրափակելով, Պլեթըրը ըսաւ, թէ ինք իբրեւ ՖԻՖԱի նախագահ իր սերտ յարաբերութիւնները պիտի շարունակէ Հայաստանի հետ:

ԹԵՆԻՍ. ՌՈՒԱՆ ԿԱՐՈՍ

ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ԴՈՒՐՍ ՄՆԱՅԻՆ

Բ. ՀԱՆԳՐՈՒԱՆԷՆ ԻՍԿ

Ֆրանսայի մէջ տեղի ունեցող թենիսի Ռուան Կարոս կրան շրջէմ մրցաշարքի Ա. հանգրուանի մրցումներուն, հայրենի Սարգիս Սարգսեան ստեղծեց մեծագոյն անակնկալը, երբ մրցաշարքէն դուրս ձգեց ամերիկացի «հրաշք մանուկ»ը՝ Էնտի Ռոտիքը, արձանագրելով՝ 6 - 7, 6 - 1, 6 - 2 եւ 6 - 4 արդիւնք մը:

29 տարեկան Սարգսեան, որ 2 ժամ եւ 10 վարկեանի մէջ պարտութեան մատնեց 20 տարեկան Ռոտիքը, Բ. հանգրուանին իր դէմ ունեցաւ Վիքթոր Հանեսքուն (Ռուսմանիա), սակայն չկրցաւ շարունակել իր յաղթական երթը եւ կանուխէն հրաժեշտ տուաւ մրցաշարքին:

Ա. հանգրուանին, իր կարգին, արժանթինահայ Դաիթ Նալպանտեան յաղթանակ մը արձանագրեց՝ 6 - 4, 6 - 3, 3 - 6 եւ 7 - 5, սպանացի Ալպեր Մոնթանէսի դէմ:

Աղջկանց մրցումներուն զուգերիահայ Մարի - Գայիանէ Միքայէլեան ապահովեց Բ. հանգրուանին իր տոմսը 6 - 3, 4 - 6 եւ 7 - 5 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք իր մրցակիցը՝ Աննելիք Ուիտմաժան (Հնդկաստան):

Արժանթինահայ Դաիթ Նալպանտեան Բ. հանգրուանին բաւական պայքարելէ ետք դուրս մնաց, հինգ սէթ մրցում մը կատարելով ֆրանսացի Նիքոլա Քոթելոյի դէմ, որ արձանագրեց 6-3, 6-3, 4-6, 2-6 եւ 6-1 արդիւնքով յաղթանակ մը:

Տարբեր էր պարագան զուգերիահայ Մարի - Գայիանէ Միքայէլեանին, որ պարտուեցաւ աշխարհի թիւ մէկէն՝ Սերենա Ուիլիըմսէն (Մ. Ն.), 6-3 եւ 6-2 արդիւնքով:



ARMENPRESS

Ապա, Հայաստանի Ողիմպիական յանձնախումբի որոշումով, Զաքարեան Պլեթըրի շնորհեց «Ոսկի նշան» շքանշանը, իբրեւ մարզական աշխարհի բացառիկ անձնատրոութիւն:

Երեւանի քաղաքապետ Ռոպերթ Նազարեան եւ Հայաստանի ֆութպոլի ֆետերասիոնի նախագահ Ռոպերթ Հայրապետեան իրենց կարգին շնորհակալութիւն յայտնեցին Պլեթըրի Հայաստան այցելութեան եւ ՖԻՖԱին տրամադրած գումարին համար:

Այցելելով մարզադպրոց, Պլեթըրը ներկայ եղաւ պատանի ֆութպոլիստներուն կատարած տասը վայրկեան տետողութեամբ մրցումի մը, որմէ ետք կատարեց մամուլի ասուլիս մը: Ան ըսաւ, որ Հայաստան հա-